

ԲԻԲԼԻԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏԻ ԼԵՈՆԵՐԸ» ԸԱՏ ՍԵՊԱԳԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Աստվածաշնչի եբրայերեն բնագրում Նոյի տապանը հանգրվանող լեռների մասին պահպանվել է հետևյալ ավանդությունը. «Եվ վերադառնում էին ջրերը երկրից՝ գալով և վերադառնալով. և հանգստացել էին ջրերը հարյուր հիսուն օրը վերջանալիս: Եվ կանգնեց տապանը յոթերորդ ամսին, ամսվա տասնյոթերորդ օրը՝ ՐՐԴ-ի լեռների վրա»¹:

Աստվածաշնչի հունարեն թարգմանության (*Septuaginta*) մեջ եբրայերեն բնագրի «ՐՐԴ-ի լեռների վրա» արտահայտությունը ընկալվել է այնպես, թե Նոյի տապանը հանգրվանել է *ἐπι τὰ ὄρη τὰ Ἀραράτ* «Արարատի լեռների վրա»²: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում, որը կատարվել է հունարենի հիման վրա, հիշյալ արտահայտությունը գրաբարով հնչել է այսպես. «ի լեռինս Արարատայ»³: Ակներև է, որ ինչպես հունարեն, այնպես էլ հայերեն թարգմանությունները մատնացույց են անում, որ Աստվածաշնչում եբրայացիները ՐՐԴ տերմինը օգտագործել են *Ararat* «Արարատ» իմաստով:

Ինչպես է. Շրադերը⁴, այնպես էլ Ի. Մ. Դյակոնովը⁵ այն կարծիքն են հայտնել, որ Աստվածաշնչի եբրայերեն բնագրի նոյյան ջրհեղեղի լեզենդում հիշատակված ՐՐԴ տերմինը պետք է կարդալ *Urartu* «Ուրարտու», որը համապատասխանում է Հին Արևելքի հզոր երկրներից մեկի՝ Ուրարտու երկրի անվանը, որը հիշատակվել է ասսուրա-րարելոնական սեպագիր արձանագրություններում: Սա նշանակում է, որ Աստվածաշնչում հիշատակված ՐՐԴ-ն կամ *Ararat*-ը ոչ թե լեռան անունն է, ինչպես սխալմամբ ենթադրվել է մինչև այժմ, այլ երկրի անուն, այն է՝ Ուրարտու երկիր, որի լեռների վրա, ըստ Աստվածաշնչի ավանդության, հանգրվանել է Նոյի տապանը:

Այս ենթադրությունը հիմնավորվում է նաև նրանով, որ Աստվածաշնչի լատիներեն թարգմանության (*Vulgata*) մեջ ջրհեղեղի ավանդության վերոհիշյալ արտահայտության ՐՐԴ-ի կամ *Ararat*-ի փոխարեն հիշատակվել

1 Священные книги (Ветхого завета, для употребления евреями), т. I, Вена, 1877, Книга бытия (Пятикнижие Моисеева), гл. VIII, с. 11, стк. 3-4; см. также И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВВИУ). – Вестник древней истории (далее – ВДИ), 1951, N 2, 3, 4, текст N 86 (2).

2 Б. Б. Пиотровскій. Ванское царство (Урарту). М., 1959, с. 33.

3 Աստվածաշնչի չի չի և Նոր կտակարանաց. Վենետիկ, 1889, գլ. VIII, տող 3-4:

4 E. Schlegel. Keilinschriften und Geschichtsforschungen. Giesen, 1878, S. 30.

5 И. М. Дьяконов. Ш. ч. ш. д., д. ш. ш. I (Հմմտ. № 62, ծանոթ. 6, № 83, ծանոթ. 7):

է Արմենիա անունը (*super montes Armentae* «Արմենիայի լեռների վրա»)՝, սա նույնպես երկրի անուն է, որի լեռների վրա, ըստ Աստվածաշնչի, հանգրվանել է Նոյի տապանը:

Արմենիա երկիրը և Ուրարտու երկիրը, ըստ հիշյալ փաստերի, նույն տարածքն է: Տարբերությունն այն է, որ այդ երկիրը ասուրա-բաբելոնական լեզուներով կոչվել է Ուրարտու, իսկ լատիներենով՝ Արմենիա: Աստվածաշնչի վերահիշյալ ավանդությունից էլ պարզ է դառնում, որ այդ երկիրը եբրայերեն կոչվել է Արարատ, որը նույն Ուրարտուն է, միայն որոշ ձայնավորների հնչյունափոխությունով, որը էական չէ սեմական լեզուների համար:

Այսպիսով, Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունում հիշատակված 'RRT-ն կամ Ararat-ը ոչ թե լեռան անուն է, այլ երկրի՝ Արարատ կամ Ուրարտու (համտ. Արմենիա) երկրի, որի լեռների վրա էլ հանգրվանել է Նոյի տապանը (խոսքը այդ երկրի ոչ թե մի լեռան մասին է, այլ ընդհանուր առմամբ լեռների մասին, քանի որ լեռ բառը հոգնակի թվով է («լեռինս»):

Ինչպես հայերը, այնպես էլ ուրիշ ժողովուրդներ համարելով, որ Աստվածաշնչի նոյյան ջրհեղեղի ավանդության գործողությունները կապված են Հայկական լեռնաշխարհի հետ, իրենք էլ հյուսել են ավանդություններ, որոնց միջոցով ձգտել են բացահայտել, թե Հայկական լեռնաշխարհի որ լեռան վրա է հանգրվանել Նոյի տապանը: Հայ ժողովուրդը միասնական կարծիք չի արտահայտել տապանակիր լեռան մասին: Պատճառն այն է, որ Հայաստանի տարբեր գավառներում ապրող բնակիչները, ովքեր հյուսել են նման ավանդություններ, ձգտել են իրենց գավառի այս կամ այն բարձր լեռը գիտել որպես տապանակիր:

Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդության հարցերով զբաղվել են մի շարք հետազոտողներ: Նրանց նպատակը նույնպես եղել է բացահայտել, թե որ լեռան վրա է հանգրվանել Նոյի տապանը: Քանի որ ջրհեղեղի ավանդությունը կապված է Հայկական միջավայրի հետ, հետազոտողներն այդ հարցում ելակետ են ընտրել Հայկական ժողովրդական ավանդությունները: Հետևելով այդ տարակարծիք ավանդություններին, հետազոտողները ևս տարբեր կարծիքներ են արտահայտել տապանակիր լեռան մասին: Նրանց մի մասը հետևել է Հայկական լեռնաշխարհի մի գավառի ավանդություններին, մյուս մասը՝ մի այլ գավառի ավանդություններին և այլն:

Մինչև Աստվածաշնչի հայերեն թարգմանվելը Հայ ժողովուրդը գանձազան ճանապարհներով ծանոթ է եղել ջրհեղեղի լեգենդին և դրա հիման վրա հյուսել է իր ավանդությունները՝ կապված տապանակիր լեռան հետ: Նման մի ավանդություն, որը հյուսել են Կորգվաց գավառի բնակիչները, հասել է Բերոսոս Քաղղեացուն (մ.թ.ա. 350) և հետագայում էլ տեղ գտել I դարի պատմիչ Հովսեպոս Փլավիոսի աշխատությունում. «Ասվում է, թե մինչև հիմա նավի մի մասը գտնվում է Արմենիայում, Կորգվաց լեռների մոտ, և որ ոմանք նրա վրայից պոկելով կուպրի կտորներ են բերում և

մարդիկ դրանք կրում են իրենց վրա իբրև հուռուժք»⁷: Թեև այստեղ չի հիշատակվում տապանակիր լեռան անունը, բայց ավանդույթյան տվյալներից հասկանալի է, որ Կորդվաց գավառի բնակիչները դեռևս Բերոսոս Քաղաքացու և Հովսեպոս Փլավիոսի ժամանակից այն միտքն են առաջացրել, թե տապանակիր լեռը գտնվել է իրենց գավառում:

Եթե հիշյալ ավանդույթունում բացակայում է տապանակիր լեռան անունը, ապա այլ ավանդույթուններում, որոնք հյուսվել են Աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո, Կորդվաց գավառի բնակիչները խոսելով այդպիսի լեռան մասին, արդեն հիշատակում են նրա անունը: Նման ավանդույթուններից մեկը, որը հասել է Փավստոս Բուզանդին, հայտնում է, թե Նոյի տապանը հանգրվանել է «ի լեռոն Սարարագայ ի սահմանս Արարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց»⁸: Ինչպես առաջարկում են Մ. Ֆրիդրիխը⁹ և Ստ. Մալխասյանցը¹⁰, սույն ավանդույթյան «ի լեռոն Սարարագայ» արտահայտությունը հին ժամանակվա կից գրույթյան համաձայն բնագրում եղել է «իլերինսարարագայ», իսկ գրիչը այն փոխանակ բառաբաժանելու «ի լերինս Արարագայ», ինչպես Աստվածաշունչում է, որի ազդեցությունն ակներև է այս ավանդույթյան ձևավորման վրա, այն բառաբաժանել է «ի լեռոն Սարարագայ»: Հաշվի առնելով Մ. Ֆրիդրիխի և Ստ. Մալխասյանցի կարծիքը, կարելի է ասել, որ Փավստոս Բուզանդին հասած Կորդվաց գավառի այս ավանդույթունը հյուսելիս տեղացիները ընդօրինակել են Աստվածաշունչի համապատասխան լեզունը, բայց Աստվածաշունչի «ի լերինս Արարատայ» արտահայտության «լերինս» բառի վերջում դրված հայերենի հոգնակի թվի հայցական հոլովի «ս» ցուցիչը անջատել են և ավելացրել «Արարագայ» բառի սկզբի մասի վրա, որպեսզի ցույց տան, թե լեռ բառը եզակի թվով պետք է լինի, այլ ոչ թե հոգնակի, իսկ Նոյի տապանն էլ հանգրվանել է Կորդվաց գավառի Սարարա լեռան վրա, այլ ոչ թե, ընդհանուր առմամբ, Արարատի կամ Ուրարտուի (Համտ. Արմենիայի) տերության լեռների վրա:

Կորդվաց գավառի մի այլ ավանդույթուն, որը հյուսվել է Փավստոս Բուզանդին հասած վերոհիշյալ ավանդույթյան ազդեցության տակ, տեղեկություններ է հաղորդում այն մասին, թե Նոյի տապանը հանգրվանել է Կորդվաց գավառի Սաղուփիա գավառի այն լեռան վրա, որը ջրհեղեղի ժամանակից սկսած Սարարաղի փոխարեն կոչվել է Սաղուփի. «...Վասն այսոր լերին ասի յԱսորոց, թէ ի նուազել ջուրցն հեղեղաց՝ եհաս տապանն ի գլուխ լերինն՝ որ է Արարագայ. և ընդ մէջ անցեալ Սղոցաձուկն՝ արդելու ըզնավն. և ասաց Նոյ որդւոցն իւրոց՝ Ո, Սաղուփի, այսինքն թե՛ Սղոցաձուկն դիպեցաւ նաւիս»¹¹: Այս ավանդույթունը, որը թվում է, թե ի դեմս Սաղուփի լեռան կրում է տեղական բնույթ, իրականում, ինչպես ասվեց

7 J. Flavius. The Antiquities of the Jews. Vol. I, London, 1881, book I, chap. III, p. 20 (93); Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Հրեական հնախոսություն. Երևան, 1976, էջ 55 (93):

8 Փ ա վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն դ. Պատմություն հայոց. Երևան, 1968, գլ. 10:

9 M. Friedr. Ararat und Masis (Studien zur Armenischen Alterthumskunde und literatur). Heidelberg, 1901, S. 84.

10 Փ ա վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն դ. նշվ. աշխ., ծանոթ. № 32:

11 Ղ. Ա լ ի շ ա ն. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց. Վենետիկ, 1910, էջ 63-64:

վերևում, առաջ է եկել Աստվածաշնչի համապատասխան լեզենդի ընդօրինակումից:

Տապանակիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Հ. Գելցերը¹², Մ. Արեգյանը¹³ և Ս. Երեմյանը տապանակիր լեռ են համարել Կորդվաց դավառում գտնվող Ջուզի-գաղը, որը սեպագիր արձանագրություններում հիշատակվել է Նիրուր անունով: Ընդ որում, Ս. Երեմյանը դիմել է սեպագիր արձանագրություններին, հաստատելու համար, թե Ջուզի-գաղը կամ Նիրուրը զուգահեռաբար, դեռևս սեպագիր ժամանակաշրջանից, երբ դեռ չէր կազմավորվել Աստվածաշնչը, կոչվել է Արարատ անունով: «Միջագետքում և Հայաստանում, որտեղ շատ հնուց հայտնի էր Ջրհեղեղի ավանդությունը, անկախ Աստվածաշնչից, Նոյի տապանի սարը համարում էին այժմյան Ջուզի-գաղ դազաթը Կորդվաց լեռներում, որը գտնվում է այժմյան Իրաքից հյուսիս՝ Թուրքիայի սահմաններում և պատմական Հայաստանի Կորճայր նահանգում:

Այս դազաթը մ.թ.ա. VIII դարում ասորեստանյան մի արձանագրության մեջ կոչվում է «Արարտու», որ նույն «Ուրարտու» անվան տարբերակն է: Որ այդ սարի հետ է կապվել Ջրհեղեղի ավանդությունը, երևում է նաև վաղ շրջանի սիրիական և հայկական աղբյուրների վկայություններից»¹⁴: Մի այլ առիթով Ս. Երեմյանը գրում է. «Արարադ լեռան (2089)-75-ուրարտերեն Arartu, ասուրա-բաբելական՝ Nibur, հուն. Νιβάρουξ, արաբ. Gabal Gaudi, այժմ՝ Ջուզի-գաղ: Ըստ տեղական ավանդության՝ այդ լեռան վրա Ջրհեղեղից հետո կանգ է առել Նոյի տապանը»¹⁵:

Քիչ հետո կհամոզվենք, որ ասուրա-բաբելոններեն սեպագիր տեքստերում հիշատակվող այն լեռը, որի մասին ասում է Ս. Երեմյանը, կոչվել է ոչ թե «Արարտու», այլ Արարգի (տարբերակ՝ Արրեգի): Այդ լեռան անունը երբեք էլ «Ուրարտու» անվան տարբերակը չի եղել: Ինչ վերաբերում է ուրարտերեն սեպագիր տեքստերին, ապա նրանցում ևս «Արարտու» անունով լեռ չի հիշատակվել, որի մասին Ս. Երեմյանը ասում է, թե իբր նրա անունը եղել է ասուրա-բաբելոններեն տեքստերում հիշատակված Նիրուր լեռան անվան ուրարտերեն տարբերակը:

Սեպագիր արձանագրությունների փաստերը վկայում են, որ Արարգի (Արրեգի) լեռը տարբերվել է Նիրուրից, և ճիշտ չէ Ս. Երեմյանը, որ Նիրուրի (հմմտ. Ջուզի-գաղ) հետ է համադրել Արարգի (Արրեգի) լեռը:

Նիրուր և Արարգի (Արրեգի) լեռների տարբերության մասին տեղեկություններ են պահպանել Ասորեստանի թագավոր Աշշուրնաժիրապալ II-ի (884/3-859) սեպագիր տեքստերը: Այդ լեռներից Նիրուրի վերաբերյալ տեղեկությունը հետևյալն է.

12 Հ. Գելցեր. Համառոտ պատմություն հայոց (թարգմ. հ. Գր. Գալեմբյարյանի). Վիեննա, 1897:

13 Մ. Արեգյան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմության մեջ. Վաղարշապատ, 1899, էջ 182-183:

14 Ս. Ս. Երեմյան. Ինչպես է ծագել «Արարատ» անունը («Սովետական Հայաստան», օրաթերթ, 1968, փետրվարի 25, № 47. (14313):

15 Ս. Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 39:

istu^{URU} Ni-nu-a at-tu-mus ana alani^{MES} -ni sa sep^{GEN} Ni-pur u^{GEN} pa-ša-ta sade^{MES} dannūti^{MES} ...istu alani^{MES} -ni sa sep^{GEN} Ni-pur u^{GEN} pa-ša-te at-tu-mus^{ID} Idiglat e-te-bir ana^{KUR} Kat-mu-hi aq-te-rib¹⁶.

«Ես դուրս ելա Նինվեից և հրապիր դնացի այն բնակավայրերի վրա, որոնք տարածված էին Նիրուր և Պածաթե հսկա լեռների ստորոտում... Ես դուրս ելա Նիրուր և Պածաթե լեռների ստորոտում գտնվող բնակավայրերից, անցկացա Տիրգրիսի վրայով և մտա Քաթմուուի երկիրը»¹⁷:

Ակներև է, որ ըստ կոնտեքստի, Նիրուր լեռը (^{GEN}Ni-bur) գտնվել է Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի և Քաթմուուի երկրի տարածքի շուրջը, որը ձգվել է Քաշիարի լեռների հյուսիսում:

Ի. Մ. Դյակոնովը Նիրուր լեռան տեղագրությունը առիթով գրում է. «Նիրուր լեռ-Տիրգրիսի ձախ ափին գտնվող ժամանակակից Ջուզի-դադն է. Ջեդիրեստ իրն-Օմարի դիմաց»¹⁸:

Արարդի (Արբեդի) լեռան վերաբերյալ տեղեկությունը պահպանվել է Աշշուրնաժիրայալ II-ի հետևյալ տեքստում.

a-na^{KUR} Kir-ru-ri^{KUR} Si-me-ra^{URU} Ul-ma-ni-a^{KUR} A-da-uš^{KUR} Har-ga-a-a^{KUR} Har-ma-sa-a-a ...ma-da-ta-su-nu am-hur ... ki-i ina^{KUR} Kir-ru-ri uš-ba-ku-ni^{KUR} Gil-za-na-a-a^{KUR} Hub-uš-ka-a-a ... ma-da-tu-šu-nu ana^{KUR} ni-rib ša^{URU} Hu-lu-un ana^{KUR} Hub-hi sa be-ta-ni etarab^{ab URU} Ha-tu^{URU} Ha-ta-ru^{URU} Ni-is-tu-un^{URU} Ir-bi-di^{URU} Met-qi-a^{URU} Ar-sa-ni-a^{URU} Te-e-la^{URU} Ha-lu-a^{MEŠ} -ni ša^{KUR} Hab-hi ša ina bi-rit^{GEN} A-ru-a^{GEN} A-ra-ar-di (var. ^{GEN}A-ar-re-di) sadani^{MES} dannuti^{MES} sak-nu^{nu} aksudud dikta^{MEŠ} -su-nu ma 'atta^{MEŠ} a-duk¹⁹.

«Մտա Քիրրուրի երկիրը, տուրքը Քիրրուրի երկրի, Սիմեսի երկրի, Սիմերա երկրի, Ուլմանիա քաղաքի, Ադաուշ երկրի, խարգայացիների, խարմասացիների... տուրքը նրանց ընդունեցի... Երբ ես գտնվում էի Քիրրուրի երկրում, դիղանացիները, խուբուշքացիները... ինձ բերեցին տուրքը: Ես դուրս ելա Քիրրուրի երկրից, խուբուշքացիներից և խարմասացիներից, որը ցածրադիր էր: Խարխի երկրի հատուկ, հատարու, Նիշիուն, Իրբիդի, Մեթկիա, Արժանիա, Թեյա, հալուա բնակավայրերը, որոնք տարածված էին Ուսու, Արուա, Արարդի (տարբերակ՝ Արբեդի) հսկա լեռների միջև, խոնարհեցի, կաղմակերպեցի նրանց մեծ ջարդը»²⁰:

Ակներև է, որ Արարդի – ^{GEN}A-ra-ar-di (տարբերակ՝ Արբեդի – ^{GIN}A-ar-re-di) լեռը գտնվել է Խարխի երկրում, որը սահմանակից է եղել Քիրրուրի երկրին: Իսկ Քիրրուրի երկրի տեղագրությունը առիթով Ի. Մ. Դյակոնովը գրում է. «Քիրրուրի-մարդ Մեծ Ջաբի հովտում, նրա դալարի մոտ: Քիրբուրի լեռնանցքը ձգվել է Փոքր Ջաբի վերին հոսանքից մինչև Մեծ Ջաբի հովիտը»²¹:

¹⁶ E. A. W. B u d g e und L. W. K i n g. Annals of the Kings of Assuria (AKA). I, London, 1902, p. 278-279. col. I, lin. 70, 73-74.

¹⁷ АВИИУ, № 23 (I, 69):

¹⁸ Նույն տեղում, № 23, прим. 19:

¹⁹ АКА, I, p. 272-275, col. I, lin. 54-61.

²⁰ АВИИУ, N 23 (I, 54, 56, 58).

²¹ АВИИУ, № 27, прим. 18.

Մատնանշված փաստերը հաստատում են, որ Նիբուր և Արարդի (տարբերակ՝ Արրեդի) լեռները գտնվել են միմյանցից հեռու, տարբեր տարածքներում: Եթե առաջինը գտնվել է Քաշիարի լեռների հյուսիսում, ապա երկրորդը՝ Մեծ և Փոքր Զաբերի միջև ձգվող տարածքի շուրջը, մասնավորապես «Մեծ Զաբի դալարի մոտ», Քիրրուրի երկրի տարածքի հետ կապված, որն Ուրարտուի կազմում չի եղել: Ահնեբև է, որ սեպագիր փաստերը, ինչպես ընդգծվեց վերևում, հերքում են այդ լեռների համադրության վերաբերյալ Ս. Երեմյանի վերոհիշյալ կարծիքը:

Այնուհետև, եթե Արարդի (Արրեդի) լեռը հիշատակվում է եզակի թվով, ապա Աստվածաշնչում Արարատ երկրի լեռները վկայված են հոգնակի թվով: Այս փաստը ոչ միայն կասկածի տակ է վերցնում, այլև մերժում է Արարդի (Արրեդի) լեռան համադրումը Աստվածաշնչի Արարատ երկրի լեռներին:

Եվ վերջապես, հակառակ Ս. Երեմյանի կարծիքի, Արարդի (Արրեդի) լեռը գտնվել է Ուրարտուի սահմաններից դուրս և այն չէր կարող Աստվածաշնչում հանդես գալ Ուրարտուի լեռների փոխարեն: Ուրարտուի սահմաններից դուրս գտնվող Արարդի (Արրեդի) լեռան անունը չէր կարող Ուրարտու անվան տարբերակը լինել:

Տապանակիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Գ. Սարգսյանն իր հետազոտությունների ընթացքում հետևել է Կորդվաց գավառի ժողովրդական ավանդություններին, այն կարծիքն է հայտնել, թե Նոյի տապանը հանգրվանել է Կորդվաց գավառի Արարադ լեռան վրա²²:

Սակայն, ինչպես ցույց տվեցին Կորդվաց գավառի հետ կապված վերոհիշյալ փաստերը, այդ գավառում Արարադ անունով լեռ գոյություն չի ունեցել: Այդ գավառի ավանդություններում հիշատակվում է Սարարադ լեռան անունը, բայց դա էլ հորինվել է Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդությունում վկայված Արարատ երկրի անվան աղավաղումից:

Հայկական այլ դավառների բնակիչները, ինչպես նաև օտար ժողովուրդները իրենց ավանդություններում փորձել են տապանակիր լեռը ներկայացնել ըստ դիտական հիմքի: Օտար ժողովուրդների հյուսած ավանդություններից մեկը, որը հասել էր Նիկողայոս Դամասկացուն (մ.թ.ա. I դ.), պահպանվել է Հովսեպոս Փլավիոսի աշխատություններում: Այդ ավանդությունում տապանակիր լեռը ցույց տալու համար որպես դիտական հիմք ներկայացվում է նրա «մեծ» հատկանիշը. «Մինիասից վերև Արմենիայում կա մի մեծ լեռ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին, և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա հավանաբար այն մարդն է, որի մասին դրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»²³: Մ. Ֆրիդրիխը նույնացնում է Բարիս և Մասիս լեռները²⁴:

22 Գ. Ս ա Ր Գ ս Յ ա ն. Մովսես խորհնացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները. - «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N2-3, էջ 36, ծանոթ. 24:

23 J. F l a v i u s. Նշվ. աշխ., էջ 20(95): Հ ո վ ս ե պ ո ս Փ լ ա վ ի ո ս. Նշվ. աշխ., էջ 55 (95):

24 M. F r i e d r i c h. Նշվ. աշխ., էջ 49.

Իհարկե, տարօրինակ ոչինչ չկա, որ օտար ժողովուրդներից մեկը Մասիս լեռը անվանել է Բարիս անունով: Այս կապակցությամբ ուշագրավ է, որ արաբական ավանդույթյուններում Մասիսը, որը դիտվել է ոչ միայն Հայաստանի, այլև մահադեղական աշխարհի ամենաբարձր լեռը, և որի վրա գտնվում են հայոց թագավորների շիրիմները իրենց գանձերով, կոչվել է Հարիս անունով⁵: Ուշագրավ է նաև այն փաստը, որ հույն պատմագիր Պլուտարքոսի (40-127) աշխատություններում պահպանված մի ավանդույթյունում Մասիս լեռը, որը գտնվել է Արաքս (Երասխ) գետի ափին և համարվել է դիցաբանական լեռ, կոչվել է Տիրոփոս անունով⁶: Սա նշանակում է, որ տարբեր ժողովուրդներ Մասիսին տվել են տարբեր անուններ: Այս փաստերը խոսում են Մ. Ֆրիդրիխի կողմից Բարիս լեռը Մասիսին համարելու վերևում արտահայտած կարծիքի օգտին, այսինքն՝ Բարիս անունը օտարների կողմից Մասիսին տրված անվանումներից մեկն է: Այստեղ կարևոր է նաև այն, որ դեռևս Նիկողայոս Դամասկոսացու ժամանակից Մասիսը գիտվել է տապանակիր լեռ: Ուշագրավ է նաև այն, որ Նիկողայոս Դամասկոսացուն հասած ավանդույթյունում այդ լեռը հիշատակվում է «մեծ», իսկ արաբական ավանդույթյուններում՝ «ամենաբարձր» անվանումներով:

Հայկական այլ գավառների բնակիչների հյուսած ավանդույթյուններից մեկում, որը պահպանվել է Հովսեպոս Փլավիոսի աշխատությունում, տապանակիր լեռ է համարվում Մասիսը. «Այնուհետև, երբ տապանը կանգ առավ Արմենիայում գտնվող մի լեռան վրա... Նոքոսն էլ իր գերդաստանով գուրս գալով, աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Արմենները մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ, քանի որ այնտեղ է փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս գրա բեկորները»⁷: Ավանդույթյունում ընդգծված «իջնելու տեղ» արտահայտությունը վերաբերում է Նախիջևանին, որի մոտ է գտնվել Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը՝ Մասիսը: Սա նշանակում է, որ սույն ավանդույթյունում էլ հայ ժողովուրդը փորձ է արել «իջնելու տեղ» արտահայտության գիտական հիմքով հաստատել, թե Նախիջևանի մոտ գտնվող Մասիսն է եղել այն լեռը, ուր հանգրվանել է Նոյի տապանը:

Հայ ժողովրդի հյուսած մի այլ ավանդույթյունում, որը տեղ է գտել Ղ. Ալիշանի աշխատությունում և հավանաբար հյուսվել է Աստվածաշնչի հայերեն լեզվով թարգմանվելուց հետո, դարձյալ որսյես տապանակիր լեռ է դիտվել Մասիսը: Ավանդույթյունում այն տեղեկությունն է հաղորդվում, թե համաշխարհային ջրհեղեղի ժամանակ Նոյի տապանը նախ հանդիպել է Վանա լճի ափին գտնվող Գրգուռ լեռանը, ապա նրա խորհրդով վերջնականապես հանդրվանել իրենից բարձր Մասիս լեռան կատարին. «Ջրոց նուազելու ատեն Տապանին տատանելով հածիլն լեռն ի լեռ, հանգստյան հարմար դիրք մը գտնելու, և գալով այս շատ անգամ հիշված Աղթամարա ծովուն կողմերը, անոր հիմա ծանոթ մի ըսել:

25 Bibliotheca Geographorum Arabicorum, vol. III, Leiden, 1967, p. 380.

26 Plutarch die fluviis (praefatio), Liptial, 1851, S. 27-28. (Համտ. Ղ. Ալիշան. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 35-36, 79):

27 J. Flavius. Նշվ. աշխ., էջ 20(90-92): Հովսեպոս Փլավիոս. Նշվ. աշխ., էջ 554(90-92):

«Գրգուռ, ընկալ զիս. և ասոր պատասխանն՝
Գնա ի Մասիս,
Զի բարձր է քան զիս»²⁸:

Ակներև է, որ Մասիս լեռան շուրջ հյուսած իր այս ավանդույթունում հայ ժողովուրդը դարձյալ փորձել է տապանակիր լեռան հարցը լուծել գիտական հիմքով: Իր այս ավանդույթունում հայ ժողովուրդը որպես գիտական հիմք է ներկայացնում տապանակիր լեռան «բարձր» հատկանիշը, որպիսին ունի Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը՝ Մասիս լեռը:

Ուշագրավ է, որ այդ լեռը Մասիս անվանը ղուգահեռ կրում է նաև Արարատ անունը: Այն հարցին, թե երբևիցե՞ն է այդ լեռը Մասիս անվանը ղուգահեռ կրել Արարատ անունը, դժվար է պատասխանել: Սակայն հայտնի է, որ այդ լեռը Մասիս անունով է կոչվել թե՛ Խորենացու պատմությունում²⁹ և թե՛ VII դարում գրված «Աշխարհացույցում»³⁰: Այդ լեռը միայն Մասիս անունով է կոչվել նաև հայկական վերոհիշյալ ավանդույթուններում: Ինչպես երևում է, լեռը ավելի ուշ ժամանակաշրջանից է կրել Արարատ ղուգահեռ անվանումը, Խորենացու ապրած ժամանակաշրջանից (V դար) և «Աշխարհացույց» գրվելու ժամանակաշրջանից (VII դար) էլ ուշ: Աստվածաշնչի ջրհեղեղի ավանդույթյան ազդեցության տակ Մասիս լեռանը Արարատ անունը տվել է հայ ժողովուրդի հատվածներից մեկը հետագա ժամանակաշրջանում, երբ փորձել է որոշել, թե որն է եղել տապանակիր լեռը, իհարկե, Աստվածաշնչի լեգենդում հիշատակված Արարատ կամ Ուրարտու (Հմմտ. Արմենիա) երկրի անունը սխալմամբ դիտելով որպես տապանակիր լեռան անուն:

Տապանակիր լեռան հարցով զբաղվող հետազոտողներից Հ. Կիպերտը³¹ և Մ. Ֆրիդրիխը³² իրենց հետազոտությունների ընթացքում հետևել են Մասիս լեռան հետ կապված ավանդույթուններին և տապանակիր լեռ են համարել Մասիսը: Ինչպես նշված ավանդույթուններ ստեղծող հայ ժողովուրդը, այնպես էլ այդ ավանդույթուններին հետևող այս հետազոտողները, անշուշտ, իրավացի են, քանի որ Մասիսը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթն է, որի վրա մարգիկ ապաստան գտնելով կարող էին այդ լեռնաշխարհի մյուս լեռների համեմատությամբ ամենից ավելի հուսալիորեն պաշտպանվել համաշխարհային ջրհեղեղի կործանումից:

Այսպիսով, ըստ Աստվածաշնչում հիշատակված ջրհեղեղի լեգենդի, Նոյի տապանը հանգրվանել է Արարատ երկրի լեռների վրա: Ըստ սեպագիր արձանագրությունների, Արարատ երկիրը համապատասխանում է Ուրարտու կամ Արմենիա երկրին: Փաստորեն Աստվածաշնչի լեգենդում հիշատակվում է, որ Նոյի տապանը հանգրվանել է Արմենիա, այսինքն՝ Ուրարտու կամ Արարատ երկրի ընդհանրապես վերջրած լեռների վրա, այլ ոչ թե այդ երկրի մի լեռան վրա, որ մինչև հիմա կարծել են հետազոտողները:

28 Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 63:

29 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի. Հայոց պատմություն. գիրք I, § 12, Երևան, 1961:

30 Ս. Տ. Ե Ր Ե մ յ ա ն. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 111:

31 H. K i e p e r t. Lehrbuch der alten Geographie. Berlin, 1877, S.75.

32 M. F r i e d r i c h. նշվ. աշխ., էջ 49:

Ինչպես հայ, այնպես էլ օտար ժողովուրդների կողմից գիտական հիմքի վրա ստեղծված ավանգուլթյունները հաստատում են, որ Աստվածաշնչում հիշատակված Ջրհեղեղի ժամանակ տապանակիր լեռը եղել է Արմենիա, այսինքն՝ Ուրարտու կամ Արարատ երկրի ամենաբարձր գագաթը՝ Մասիսը, որի վրա հանգրվանելով Նոյի տապանը փրկել է մարգկային ցեղը այդ Ջրհեղեղի կործանումից:

БИБЛЕЙСКИЕ "ГОРЫ АРАТА" ПО КЛИНОПИСНЫМ НАДПИСЯМ

ДМИТРИЙ САРКИСЯН

Резюме

В еврейском подлиннике Библии упоминается, что во время всемирного потопа Ноев ковчег нашел прибежище "на горах 'RRṬ'", т.е. нашел прибежище не на одной горе, как воспринималось до сих пор со стороны исследователей, а "на горах". И в греческом переводе Библии (Septuaginta) термин 'RRṬ' еврейского подлинника воспринимался как Арарат. А в латинском переводе (Vulgatian) это воспринималось как Армения. Естественно, Армения – название страны. Этот факт указывает, что Арарат также название страны, которое соответствует Урарту ассиро-вавилонских клинописных надписей, которым именовалась страна Армения в клинописную эпоху. Фактически в Библии сохранилось сведение, что Ноев ковчег нашел прибежище не на конкретно взятой одной горе страны Армения, т.е. Урарту или Арарат, а вообще на горах страны. Как со стороны армян, так и других народов, созданные на научной основе традиции подтверждают, что во время потопа упомянутой в Библии конкретно взятой горой-прибежищем была самая высокая вершина страны Армения, т.е. Урарту или Арарат-Масис, пристав к которой, Ноев ковчег спас человеческое племя от исчезновения во время этого потопа.